

**ԱՂՕԹՔԻՆ ՄԷՉ
ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ**

Քրիստոսի Աւետարանը մեզի կը հաղորդէ այնպիսի դասեր, որոնք մեր բովանդակ կեանքի ուղին կը նշոյն: Մեր առջեւ պարզուող պատկերը պարզ է: Այրի կին մը իր դասի լուծումին համար անընդհատ կը դիմէ դատաւորին, որ անտես կ'առնէ պարագան: Բայց այրին կը յարատեւէ իր հետապնդումներուն մէջ: Քրիստոս մատնացոյց կ'ընէ այրին, որ յարատեւ եւ անձանձրոյթ կ'աղօթէ, մինչեւ որ կը գտնէ իր դասին լուծումը:

Կեանքին մէջ յաջողութեան պայմանն է յարատեւութիւնը: Նոյնն է պարագան աղօթքի կեանքին: Աղօթքը պիտի ըլլայ յարատեւ: Մանաւանդ այն մարդիկ, որոնք չունին աղօթքի կեանքին վարժութիւնը, ապա այդպիսիները իրենց մէջ պիտի մշակեն աղօթքի կեանքը յարատեւութեամբ արտասանելով հայրերու աղօթքները, մինչեւ որ արտասանուած աղօթքները դարձնեն իրենց արտին աղօթքը եւ անոնցմէ կարողանան փառել հոգեւոր սնունդը, ինչպէս մեզուն ծաղիկներէն կը փառէ իր ծծումբը, նեկտարը:

Յիշեցէ՛ք ուրեմն Տիրոջ խօսքը. «Յամենայն ժամ յաղօթս կացէ՛ք եւ մի՛ ձանձրանայցէ՛ք»:

ՊԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութիւնը մեր բարկութիւնը զսպելն է, հեզութեան ճամբան ընտրելն է, մաքուր եւ ուղիղ սիրտ ունենալն է, մեզմէ վատ մտածումներն ու փափաքները հեռացնելն է, բարեգործութեան կեանք մը ապրիլն է: (Մեծն Բարսեղ)

**ԵՐԲ ԳԻՇԵՐԸ ՀԱՆԳԻՍ
ՔՈՒՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ,
ԸՆԱՆԱԼԷՆ ԱՌԱՋ ԿԱՐԴ՝**

Սաղմոս 3

Տէ՛ր, ի՛նչքան շատ եմ գիս նեղոցները, ի՛նչքան շատ եմ ինձի դէմ ելողները:

Շատերը ինձի համար կ'ըսեն. «Անկարելի է, որ Աստուած զինք փրկէ»:

Բայց դուն ո՛վ Տէ՛ր, Դո՛ւն ես պաշտպան վահանս, դո՛ւն ես փառքս, գլուխս բարձր պահողը:

Ամբողջ ձայնով ՏԻՐՈՋ աղաղակեցի եւ իր սուրբ լեռնէն պատասխան տուաւ ինձի:

Ես կը պառկիմ, կը քնանամ, վստահ, որ գիշերն ամբողջ Տէ՛ր՞ զիս կը պահպանէ: Ուստի բնա՛ւ չեմ վախճար բիւրաւոր այն մարդոցմէ, որոնք ամէն կողմէ զիս կը պաշարեն:

Ե՛ւ, ո՛վ Տէր, փրկէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս, ապտակ մը տուր թշնամիներուս, փշրէ՛ ամբարիշտներուն ակունքները:

Փրկութիւնը դո՛ւն կուտաս, Տէ՛ր, թող օրհնութիւնդ ժողովուրդիդ վրայ ըլլայ:

Միտելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարգալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱՏԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՍ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 22 ՄԱՐՏ 2020 ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 65.8-25 Փիլ. 3.1-4.9:
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍ 17. 20-18.14

Ե. ԸՆԱՍՆՈՐԴԱՑ: ԴԱՏԱՌՐԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 17. 20-18.14

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն ցոյց տալու համար, թէ պէտք է միշտ աղօթել առանց վիատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մէջ դատարար մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախճար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատարարը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախճար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ բովս գալով զիս չանհանգստացնէ»: Այս Տէրը շարունակեց. «Լսեցէ՛ք, թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատարարը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որ գիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեն ձեզի, որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային, թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւրը՝ մաքսարար: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսարարին պէս ալ չեմ: Այլ շաբաթ երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսարարը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեն ձեզի, եզրակացուց Յիսուս, - ո՛չ թէ փարիսեցին, այլ՝ մաքսարարը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
65.8-25

Տէրը այսպէս կ'ըսէ.–

«Այնպէս ինչպէս երբ ողկոյզին վրայ խաղողի բիռ մը մնացած ըլլայ՝ կ'ըսեն. «Մի՛ նետեր ողկոյզը, որովհետեւ անոր վրայ Տիրոջ օրհնութիւնը կայ», այնպէս ալ ես իմ ծառայիս սիրոյն պիտի խնայեմ եւ կորուստի պիտի չմատնեմ բոլորը:

Յակոբի որդի Յուդայէն սերունդ մը պիտի հանեմ, որ իմ սուրբ լեռնային պիտի ժառանգէ: Իմ ընտրեալներս գայն պիտի ժառանգեն եւ իմ ծառաներս այնտեղ պիտի բնակին:

Ձիս փնտոող ժողովուրդիս համար Սարոնը հօտերու արօտավայր պիտի ըլլայ եւ Աֆոքի ձորը՝ նախիրներու հանգստավայր:

Իսկ ձեզ, որ զիս թողուցիք, իմ սուրբ լեռնային մոռցաք, Բախտի կուռքին սեղան կանգնեցիք եւ ճակատագրի չաստուծոյն գինի ընծայեցիք, ձեզ սուրբ պիտի մատնեմ եւ բոլորդ պիտի կոտորուիք, որովհետեւ կանչեցի ձեզ եւ չսեցիք, խօսեցայ եւ մտիկ չըրիք: Ըրիք այն՝ ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցիք այն՝ ինչ որ կամֆիս հակառակ է»:

Ուստի այսպէս կ'ըսէ Տէրը. «Ահաւասիկ, ինծի ծառայողները պիտի կշտանան, մինչ դուք անօթի պիտի մնաք: Ինծի ծառայողները պիտի յագեցան, մինչ դուք ծարաւ պիտի մնաք: Ինծի ծառայողները պիտի ուրախանան, մինչ դուք ամօթով պիտի մնաք: Ինծի ծառայողները սիրտի ուրախութեամբ պիտի ցնծան, իսկ դուք ձեռք սիրտին ցաւէն պիտի աղաղակէք, անյոյս հոգիով պիտի ողբաք, որովհետեւ իմ ընտրեալներս նգովքի տեղ ձեր անունը պիտի գործածեն, եւ ես՝ Տէրս ձեզ մահուան պիտի մատնեմ...»

Շարունակել Աստուածաշունչէն



ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ

3.1- -4.9


Հետեւաբար, եղբայրներ, Տիրոջմով ուրախացէ՛ք: Նոյն բաները գրելը ինծի համար ձեռնարկ չէ, բայց ձեզ նշարտութեան մէջ կը հաստատէ:

Ձգուշացէ՛ք այն մարդոցմէ, այն շունքներէն, որոնք չարիք կը սերմանեն ստիպելով՝ որ թլփատուիք: Իսկական թլփատուածները մեմք ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք եւ Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով միայն կը պարծենանք եւ ոչ թէ Օրէնքի գործունէութեամբ կամ Աբրահամի մարմնաւոր գաւակը ըլլալով: Եթէ անոնք բաւարար ըլլային փրկելու համար, ինծի ոչինչ պիտի պակսէր եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ, թէ մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, եւ աւելիով կրնամ, քանի որ քրիստոս թլփատուած իսրայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն, գտարիւն եբրայեցի եւ օրինապահ փարիսեցի: Այնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի եւ արդար էի այնքան, որքան օրէնքի անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար: Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ՝ համեմատած այն գերագանց շահին հետ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը մեզնայն է:

Շարունակել ընթերցել Աւետարանէն

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԸ



Քառասուն Մանկանց տօնը կը յիշատակուի Կապադովկիոյ Հռովմէական գորագունդին պատկանող Քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (Մանուկ զրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ո՛չ մեր հասկացողութեամբ երեխայ): Թէեւ հաստատուած է, թէ հաւատքով քրիստոնեայ այս 40 երիտասարդները ինչ ազգութեան կը պատկանին, բայց հայ ժողովուրդը անոնց հաւաքական նահատակութիւնը կը սրբագործէ ու արժանի կը դարձնէ հանդիսաւոր կրօնական տօնախմբութեանց եւ ժողովրդական յիշատակութեան:

Հռովմէական բանակէն ներս խիստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիններուն քրիստոնեայ ըլլալը: Մի քանի անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ Հին աստուածներուն, թէ ոչ՝ ենթարկուիլ հաշուեյարդարի:

Երիտասարդները, համարձակախօս եւ անդրդուելի, կը յայտնեն՝ թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սերաստիոյ թագաւորին, սակայն ուխտ ունին նաեւ անխախտ պահելու իրենց երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը, որ իրենց համար կենսական է, աղբիւր է յոյսի, խանդավառութեան եւ քաջութեան: Իբրեւ պատիժ այս ընդդիմախօսութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ: Նոյն ատեն կը յայտարարուի, թէ եթէ անոնք յանկարծ դարձ գործեն դէպի Հին աստուածները, լիճին ափին իրենց տրամադրութեան տակ կայ բաղնիք եւ ջուր:

Քառասուն քաջ երիտասարդները հաւատքի գորութեամբ կ'որոշեն ընդունիլ իրենց վերապահուած ճակատագիրը: Անոնցմէ մէկը միայն, չղիմանալով այս մահին, կը վազէ սառած ջուրէն դուրս, սակայն տաք ջուրին հագիւ դպած, յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած 39-ը կը մնան անդրդուելի: Գիշերով, յանկարծ երկնային լոյս մը կը ճառագայթէ լիճին վրայ ու լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, անմիջապէս դարձի կու գայ ու կը յայտարարէ, թէ ինք կը դառնայ Քրիստոնեայ, անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուններով գինուորը:

Լիբանանի մէջ Ս. Քառասնից Մանկանց անունը կրող Եկեղեցի ունինք որ կը գտնուի Պուրճ Համուտի շրջանին մէջ: